ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/86

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2022թ. թիվ 26/26-1/3516-2022 գրությամբ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 22.02.2022թ. թիվ 0163 գրության հիման վրա, 01.03.2022թ. թիվ 26/26-1/3516-2022 գրությամբ նախաձեռնել է «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 05.03.2022թ. գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2022/86 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումներն և միջնորդությունը.

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված թիվ «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ընթացակարգի 21, 24, 26, 28-32, 34-41 և 52-րդ չափաբաժինների մասով:

Այնուհետև՝ Ընկերությունը նկատել է, որ ներկայացված գնային առաջարկի 26-րդ չափաբաժնում տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ և 16.02.2022թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված գրությամբ բարձրաձայնել է նշված խնդիրը և առաջարկել է՝ հաշվի առնելով վկայակոչված տեխնիկական վրիպակը, ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Փաստացի, Ընկերությունը չի հրաժարվել Ընթացակարգին հետագա մասնակցությունից, այլ միայն պատվիրատուին ներկայացրել է խնդրանք առաջարկություն և ակնկալել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավասու կլինի առանց Ընկերության համար բացասական հետևանքներ առաջացնելու ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Նման պարագայում գտնում եմ, որ եթե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նման իրավասությամբ օժտված չէր, հետևաբար տվյալ գրության հիման վրա չպետք է մերժեր Ընկերության հայտը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի հիմքով պայմանավորված Ընկերության տվյալները ներկայացներ լիազորված մարմնին՝ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, քանի որ հարկ եմ համարում կրկին ընդգծել այն կարևոր հանգամանքը, որ Ընկերությունը չի հրաժարվել գնման գործընթացի հետագա մասնակցությունից, այլև առկա է միայն խնդրանք առաջարկություն, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից նման հետևությունների հանգելն իրավաչափ չէ:

Ավելին՝ եթե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերությանը տեղեկացներ, որ նման իրավասությամբ օժտված չէ և չի կարող գործի լուծմանը դրական ընթացք տալ՝

առանց Ընկերության համար բացասական հետևանքներ առաջացնելու, ապա Ընկերությունը՝ հաշվի առնելով բացասական հետևանքները, պատրաստակամ էր ինչպես Ընթացակարգի մյուս ընտրված մասնակից ճանաչված չափաբաժիններով, այնպես էլ 26-րդ չափաբաժնի մասով՝ անգամ նման ցածր գնով, կնքել պայմանագիր:

Ելնելով վերոնշված փաստական հանգամանքից, միջնորդում եմ՝ պարտավորեցնել ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը և որոշում կայացնել Ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով Ընկերության հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ներկայացված փաստական հանգամանքը, ինչպես նաև Ընկերության գործարար համբավն ու երկար տարիների փորձը պետական գնումների ոլորտում՝ խնդրում եմ Ընկերության դրսևորած վարքագիծը՝ չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/86 ընթացակարգի շրջանակներում 07.03.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) 22.02.2022թ. թիվ 0163 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ի կողմից «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ձևով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակներում «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն (Հասցե ք.Երևան, Հր.Ներսիսյան 10-3/1, հեռ. 010-23-08-40, 091-41-80-71, ՀՎՀՀ 00650292, էլ. հասցե tender@immunofarm.net) ներկայացրել է 26-րդ չափաբաժնի մասով (Ց ռեակտիվ պրոտեին-լատեքս) նվազագույն գնային առաջարկ (50000 դր առանց ԱԱՀ) և զբաղեցրել 1-ին տեղ:

Սույն թվականի փետրվարի 16-ին «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, համաձայն որի տեղի է ունեցել տեխնիկական վրիպում 26-րդ չափաբաժնի գնային առաջարկում:

Հիմք ընդունելով տվյալ գրությունը գնահատող հանձնաժողովը 26-րդ չափաբաժնի մասով «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հայտը մերժել է և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին ճանաչել հաղթող մասնակից:

Կից ներկայացվում է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գրությունը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/86 ընթացակարգի շրջանակներում 07.03.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2022/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2022թ. հրավիրված միաժամանակյա բանակցությունների նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով 16.02.2022թ. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, որոշում է կայացրել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հայտը 26-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

3. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ին ուղղված 16.02.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի՛ Ս.Գասպարյան,

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն մասնակցել է Ձեր կողմից կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցմանը, սակայն ներկայացված գնային առաջարկի 26-րդ չափաբաժնում մեր կողմից տեղի է ունեցել տեխնիկական վրիպում, այն է՝ 600000 (վեց

հարյուր հազար) դրամի փոխարեն ներկայացրել ենք 60000 (վաթսուն հազար) դրամ ամբողջ չափաբաժնի համար ներառյալ ԱԱՀ-ն: Խնդրում ենք Ձեզ, հաշվի առնել նշված հանգամանքը և հաղթող ճանաչել հաջորդ նվազագույն գին ներկայացրած մասնակցին»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 01.03.2022թ. թիվ 26/26-1/3516-2022 գրությունը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 22.02.2022թ. թիվ 0163 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված

ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.02.2022թ. հրավիրված միաժամանակյա բանակցությունների նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով 16.02.2022թ. «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, որոշում է կայացրել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հայտը 26-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն «Գյումրու ԲԿ» ՓԲԸ-ին ուղղված 16.02.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի՛ Ս.Գասպարյան,

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ն մասնակցել է Ձեր կողմից կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով գնանշման հարցմանը, սակայն ներկայացված գնային առաջարկի 26-րդ չափաբաժնում մեր կողմից տեղի է ունեցել տեխնիկական վրիպում, այն է՝ 600000 (վեց հարյուր հազար) դրամի փոխարեն ներկայացրել ենք 60000 (վաթսուն հազար) դրամ ամբողջ չափաբաժնի համար ներառյալ ԱԱՀ-ն: Խնդրում ենք Ձեզ, հաշվի առնել նշված հանգամանքը և հաղթող ճանաչել հաջորդ նվազագույն գին ներկայացրած մասնակցին»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Այսպիսով՝ Ընկերությունը 16.02.2022թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է ներկայացված գնային առաջարկի 26-րդ չափաբաժնում թույլ տրված վրիպակի մասին և խնդրել հաշվի առնել նշված հանգամանքը և հաղթող ճանաչել հաջորդ նվազագույն գին ներկայացրած մասնակցին, ինչը հիմք ընդունելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.02.2022թ. հրավիրված միաժամանակյա բանակցությունների նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշում է կայացրել «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հայտը 26-րդ չափաբաժնի մասով մերժելու վերաբերյալ:

Մինչդեռ՝ սույն գործի փաստական հանգամանքների, մասնավորապես՝ Ընկերության 16.02.2022թ. գրության և սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշման ուսումնասիրության արդյունքում, հարկ եմ համարում արձանագրել, որ Ընկերությունը փաստացի չի հրաժարվել «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/5» ծածկագրով ընթացակարգին հետագա մասնակցությունից, որպիսի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության հայտը մերժելով գործել է ոչ իրավաչափ, հետևաբար՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների արդյունքում ծագած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս Ընկերության և հանգեցնել վերջինիս նկատմամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման հիմքով պատասխանատվության միջոցի կիրառմանը, այն է՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ինչ վերաբերում է Ընկերության՝ դիրքորոշմամբ ներկայացված միջնորդությանը գնահատող հանձնաժողովին Ընկերության հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելուն և Ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով Ընկերության հետ պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելուն պարտավորեցնելու վերաբերյալ, հարկ եմ համարում հայտնել, որ սույն ընթացակարգը նախաձեռնվել է «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու հարցը քննության առնելու նպատակով, որի շրջանակներում Ընկերության ներկայացված պահանջը քննության ենթակա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 01.03.2022թ. թիվ 26/26-1/3516-2022 գրությամբ «Իմմունոֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**